Հայոց ցեղասպանության ճանաչման իսրայելական նախաձեռնությունը. կեղծ մեկնա՞րկ, թե՞ անշրջելի գործընթացի սկիզբ

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 08.08.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է այն պատճառները, որոնց հետևանքով Բինյամին Նեթանյահուի կառավարության նախաձեռնությունը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, չիրականացվեց Իսրայելի 25-րդ գումարման Քնեսեթում: Դիտարկվում են Թուրքիայի և Ադրբեջանի կողմից նախաձեռնությանը հակազդելու մեթոդները՝ ընդգծելով նրանց մոտեցումների տարբերությունը. Անկարայի կոշտ ճնշումից մինչև Բաքվի «փափուկ ուժի» գործիքների կիրառումը: Հատուկ ուշադրություն է դարձվում այն գործոններին, որոնք ազդել են իսրայելական ղեկավարության որոշման վրա՝ քվեարկությունը հետաձգելու ուղղությամբ, ներառյալ պաշտոնական Երևանի զուսպ դիրքորոշումը և Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերության նշանակությունը: Կանխատեսվում է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը շարունակում է մնալ գործիք Իսրայելի և Թուրքիայի միջև սրվող մրցակցության շրջանակում և կարող է կրկին արդիականանալ Իսրայելում աշնանային ընտրություններից հետո:

Բանալի բառեր. *Իսրայել, Հայոց ցեղասպանություն, Քնեսեթ, Թուրքիա, Ադրբեջան, Բինյամին Նեթանյահու, արտաքին քաղաքականություն, աշխարհաքաղաքականություն, Մերձավոր Արևելք, միջազգային հարաբերություններ:*

1. Քաղաքական խուսավարման ժամանակագրությունը. միաձայն որոշումից մինչև խորհրդարանական փակուղի

2026 թ. հունիսի 28-ին Իսրայելի նախարարների կաբինետի նիստում կառավարության անդամները միաձայն կողմ քվեարկեցին Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Ըստ ընդունված որոշման՝ նախաձեռնությունը պետք է ներկայացվի Քնեսեթի քննարկման և նախաստորագրման՝ դրան օրենքի ուժ հաղորդելու նպատակով: Խոսքը վերաբերում է Իսրայելի 25-րդ գումարման խորհրդարանի վերջին քառօրյա նիստին, որը նախատեսված է հուլիսի 14-17-ը: Հայտնի էր, որ եթե Քնեսեթը չհասցնի այդ ժամանակահատվածում քվեարկել 20-րդ դարասկզբի իրադարձությունները որպես ցեղասպանություն ճանաչելու հարցի շուրջ, ապա նախաձեռնությունը կամ ինքնաբերաբար կդադարի գործել, կամ լավագույն դեպքում կփոխանցվի 26-րդ գումարման խորհրդարանի քննարկմանը, որը կձևավորվի Իսրայելում աշնանային ընտրությունների արդյունքում: Այսպիսով, Թուրքիան և Ադրբեջանը, որոնք անմիջականորեն արտահայտեցին իրենց շահագրգիռ դիրքորոշումը, մոտ երկու շաբաթ ժամանակ ունեին՝ խոչընդոտելու Քնեսեթի կողմից ճանաչման ակտի նախաստորագրման ընթացակարգը:

2. Թուրք-ադրբեջանական երկյակ. ճնշման մեթոդներն ու «փափուկ ուժը»

Թուրքիան որդեգրել է կոշտ դիրքորոշում՝ պատրաստակամություն հայտնելով համաչափ պատասխան տալ Թել Ավիվին: Երկրի քաղաքական ղեկավարությունը ոչ

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 21.07.2026 թ.:

միայն սաստկացրել է Իսրայելի կառավարության քննադատությունը, այլև Քնեսեթի եզրափակիչ նստաշրջանի սկզբում հայտարարել է միջազգային ասպարեզում գործնական քայլերի մասին: Մասնավորապես, 2026 թ. հուլիսի 14-ին Ստամբուլի 11-րդ Բարձրագույն քրեական դատարանը միջազգային ձերբակալման օրդեր է տվել Իսրայելի վարչապետ Բ. Նեթանյահուի նկատմամբ: Առիթը 2025 թ. հոկտեմբերին իսրայելցի զինվորականների կողմից **Global Sumud Flotilla (GSF)** մարդասիրական նավատորմի որսալն էր, որն ուղևորվում էր ՑԱԽԱԼ-ի կողմից շրջափակված Գազայի հատված: Ստամբուլի դատախազությունը Նեթանյահուին և ևս 35 բարձրաստիճան պաշտոնյաների մեղադրանք է առաջադրել «ցեղասպանության», «մարդկության դեմ հանցագործությունների», «ազատությունից ապօրինի զրկելու», «խոշտանգումների» և «ավազակության» հոդվածներով: Ընդհանուր առմամբ նշված մեղադրանքները նախատեսում են ցմահ ազատազրկում և 1102 տարի 9 ամսից մինչև 4596 տարի բանտային ժամկետներ: Այդ քայլով Անկարան հստակ ցույց տվեց, որ «հայկական հարցի» շուրջ փոխզիջումները բացառված են և շարունակեց մեծացնել ճնշումը Իսրայելի վրա:

Ադրբեջանը, հակառակը, որդեգրեց ավելի չափավոր մոտեցում: Քնեսեթի նստաշրջանին նախորդող երկու շաբաթվա ընթացքում Բաքուն փորձեց Թել Ավիվին փոխանցել, որ «հայկական հարցի» պատճառով թուրք-իսրայելական հարաբերությունների հետագա սրումը կարող է դառնալ անհաղթահարելի խոչընդոտ դրանց կարգավորման ճանապարհին: Այսպես, Իսրայելի նախարարների կաբինետի կողմից Հայոց ցեղասպանության մասին բանաձևի հաստատումից անմիջապես հետո Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը կոչ արեց իսրայելական կողմին վերանայել իր դիրքորոշումը և հրաժարվել խորհրդարանում օրինագծի քննարկումից: Բաքվում ընդգծեցին, որ Ցեղասպանության պաշտոնական ճանաչումը բացասաբար կանդրադառնա ադրբեջանա-իսրայելական երկկողմ համագործակցության վրա: Դրանից հետո՝ 2026 թ. հուլիսի 1-ին, Ադրբեջանի երեք հրեական համայնքների (աշկենազի, սեֆարդական և լեռնային հրեական) ղեկավարները համատեղ բաց նամակով դիմեցին Թել Ավիվին՝ նշելով, որ բանաձևի հաստատումը կվտանգի երկու պետությունների միջև ձևավորված բացառիկ ամուր գործընկերային կապերը:

Մի շարք վերլուծաբանների կարծիքով, Թել Ավիվի հետ երկարամյա սերտ համագործակցության ընթացքում Բաքուն իսրայելական քաղաքականությունում ձևավորել է ազդեցության լուրջ խողովակներ, որոնք բավարար են հակաթուրքական օրինագծերը չեզոքացնելու համար: Այս մասին բացահայտ հայտարարում էին ադրբեջանական իշխանությունների նկատմամբ բարեհաճ լրատվամիջոցները: Փորձագետները մատնանշում են Իսրայելում Ադրբեջանի լոբբիստական գործունեության կտրուկ ուժեղացման անուղղակի նշանները, ինչպես նաև միջպետական մակարդակով ոչ պաշտոնական շփումների աշխուժացումը: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Բաքվի հրապարակային պաշտոնական

ուղերձները կազմում են Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումը տապալելու նրա իրական և ծավալուն արշավի միայն չնչին մասը:

Ի տարբերություն Թուրքիայի, որը խզեց պաշտոնական շփումները Իսրայելի ներքաղաքական ուժերի հետ և ընտրեց արտաքին կոշտ ճնշման ուղին, Ադրբեջանը կենտրոնացավ «փափուկ ուժի» գործիքների կիրառման վրա՝ Իսրայելի ղեկավարությանը կառուցողական երկխոսության մեջ ներգրավելու նպատակով: Չի բացառվում, որ նման հակադիր մոտեցումների ընտրությունը նախապես համաձայնեցվել է Բաքվի և Անկարայի կողմից՝ առավելագույն արդյունավետության հասնելու համար:

Քնեսեթի օրակարգից տվյալ հարցի հանման մասին տեղեկությունը առաջինը՝ 2026 թ. հուլիսի 10-ին, տարածել են ադրբեջանական լրատվամիջոցները: Պաշտոնական Թել Ավիվը այդ հաղորդագրությունները մեկնաբանության չի արժանացրել, սակայն տեղի քաղաքական վերլուծաբանները դա համարել են ցուցադրական փաստ: Նստաշրջանի մեկնարկից ընդամենը մի քանի օր առաջ աջ արմատական կուսակցությունները՝ իշխող կոալիցիայում «Լիկուդ»-ի գործընկերները (որոնց նախարարներն ավելի վաղ հավանություն էին տվել կառավարության բանաձևին), արտահերթ օրակարգ են մտցրել մի շարք լրացուցիչ հարցեր, որոնք իրենց նշանակությամբ բոլորովին անհամեմատելի էին Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագծի հետ: Վերլուծաբանների գնահատմամբ՝ այդ քայլը նպատակ ուներ միտումնավոր խտացնել Քնեսեթի աշխատանքային ժամանակացույցը, ինչի արդյունքում ամառային եզրափակիչ նիստի օրակարգից ինքնաբերաբար բացառվեց «հայկական թեմատիկայով» քննարկումն ու քվեարկությունը:

Այս խուսավարման միջոցով Բ. Նեթանյահուի գործընկերները արհեստականորեն ստեղծեցին ժամանակի սղություն, որպեսզի քվեարկության չեղարկումը դիտվի որպես տեխնիկական վերադրման հետևանք, այլ ոչ թե նպատակաուղղված քաղաքական որոշման արդյունք: Ի վերջո, օրինագիծը դուրս մղվեց աշխատանքային ծրագրից, իսկ խորհրդարանի ավարտվող նիստի վերջին գործողությունը դարձավ ինքնալուծարման ակտի հաստատումը:

3. Արգելափակման աշխարհաքաղաքական պատճառները. Բաքվի դերը և Երևանի դիրքորոշումը

Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագծի քվեարկության տապալման իրական դրդապատճառները Իսրայելի փորձագիտական հանրությունում և ԶԼՄ-ներում բաց քննարկման առարկա դարձան միայն այն բանից հետո, երբ Քնեսեթը հայտարարեց ինքնալուծարման մասին: Մասնավորապես, 2026 թ. հուլիսի 19-ին *«Հաարեց»* պարբերականը, հղում անելով կառավարական աղբյուրներին, հաղորդեց, որ Բաքվի ազդեցության տակ խորհրդարանական լսումների չեղարկման գործընթացին անմիջականորեն միջամտել է Իսրայելի վարչապետ Բ. Նեթանյահուն: Թերթի տեղեկացմամբ, առիթը եղել է Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության

հարցերով խորհրդական Հիքմեթ Հաջիևի հեռախոսազանգը Իսրայելի վարչապետի աշխատակազմ: Ենթադրվում է, որ Իլհամ Ալիևը իր ներկայացուցչի միջոցով Իսրայելի առաջնորդին նախազգուշացրել է, որ «հայկական հարցում» «կարմիր գծի» հատումը թուրք-իսրայելական հակամարտության սրման դեպքում կստիպի Ադրբեջանին աջակցել Անկարային:

Միաժամանակ, հաշվի առնելով իրանական ուղղությամբ Բաքվի ռազմավարական նշանակությունը Թել Ավիվի համար, Ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը կարող էր պայմանավորված լինել մի շարք զգայուն հարցերի շուրջ Իսրայելի հետ համագործակցությունը խորացնելու ադրբեջանական կողմի հակընդդեմ խոստումներով:

Փորձագիտական հանրության գերիշխող կարծիքով՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում «արմատական գծից» Բ. Նեթանյահուն հրաժարվել է՝ ձգտելով խուսափել իսլամական աշխարհի հետ հարաբերությունների համատեքստում Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերության իր ամենանշանակալի ակտիվներից մեկի արժեզրկումից:

Միևնույն ժամանակ շրջանառվում է տեսակետ, որ ճանաչման օրակարգից Իսրայելի կառավարության հեռանալը պայմանավորված էր նաև պաշտոնական Երևանի խիստ զուսպ արձագանքով: Քվեարկությունից անմիջապես հետո ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պատասխանելով լրագրողների հարցերին, նշել է, որ Հայաստանի իշխանությունները նպատակահարմար չեն գտնում որևէ դիրքորոշում որդեգրել Բ. Նեթանյահուի կառավարության որոշման վերաբերյալ և չեն ցանկանում որևէ մեկի շահերից ելնելով քաղաքականացնել այդ հարցը:

Այս ազդակը վկայեց, որ իսրայելական նախաձեռնությունը չի աջակցվի Երևանի կողմից և չի ազդի Թուրքիայի ու Ադրբեջանի հետ Հայաստանի «հարաբերությունների կարգավորման» գործընթացի վրա: Թել Ավիվում արձանագրել են, որ Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը, առնվազն Հայաստանի ներկայիս իշխանությունների օրոք, հնարավոր չէ վերածել աշխարհաքաղաքական ակտիվի, որը կարող է Երևանին ներքաշել Թուրքիայի հետ դիմակայության նոր փուլի մեջ՝ ի շահ հրեական պետության:

«Հայկական հարցի» համատեքստում Ադրբեջանի կողմից Իսրայելին ուղղված ևս մեկ կարևոր ազդակ դարձավ Քնեսեթի նիստի օրերին Բաքվում Պաղեստինի վարչապետ Մուհամեդ Մուստաֆայի ընդունելությունը: 2026 թ. հուլիսի 16-ին իր նստավայրում տեղի ունեցած հանդիպման ընթացքում Իլհամ Ալիևը հայտարարեց, որ «Բաքուն աջակցում է անկախ և ինքնիշխան Պաղեստին պետության ստեղծմանը՝ Արևելյան Երուսաղեմ մայրաքաղաքով»: Ադրբեջանի նախագահի այս հայտարարությունն ընդգծված հակահիսրայելական ուղղվածություն ուներ և դժվար թե դիտարկվեր Իսրայելում Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ ընթացող քաղաքական բանավեճից դուրս:

Այս համատեքստում օրինաչափ է հարցադրումը, թե ինչու Անկարան և Բաքուն չդադարեցրին աննախադեպ ճնշումը Թել Ավիվի վրա, եթե նույնիսկ Քնեսեթի աշխատանքի

վերջին չորս օրվա մեկնարկից առաջ արդեն պարզ էր, որ Բ. Նեթանյահուի կոալիցիան արգելափակել է իր իսկ նախաձեռնած օրինագիծը: Հենց այդ ժամանակահատվածում Ստամբուլի քրեական դատարանը թույլատրեց Իսրայելի վարչապետի միջազգային ձերբակալությունը, իսկ Ադրբեջանի ղեկավարությունը բացահայտ համերաշխություն հայտնեց Պաղեստինի անկախության գաղափարին՝ Արևելյան Երուսաղեմի վարչական կենտրոնով հանդերձ:

Այս առումով հնարավոր են երկու բացատրություններ.

1. Անկարան և Բաքուն մինչև Քնեսեթի ինքնալուծարումը սպասում էին, որ Բ. Նեթանյահուն և նրա կոալիցիոն գործընկերները, չնայած Բաքվին տված խոստումներին, կարող են ցանկացած պահի նախաձեռնել քվեարկություն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցով: Այդ պատճառով թեմայի շուրջ ծածուկ «սակարկությունները» շարունակվեցին մինչև խորհրդարանական նիստի գրեթե վերջին ժամերը:

2. Անկարայի և Բաքվի անհանգստությունը կարող էր պայմանավորված լինել նրանով, որ Բ. Նեթանյահուի կոալիցիան պաշտոնապես չի հրաժարվել նախաձեռնությունից, այլ դրա քննարկումը միայն ձևական-իրավական առումով հետաձգել է ապագայի համար:

4. «Հայկական հարցի» հեռանկարները Իսրայելում կայանալիք ընտրությունների լույսի ներքո

2026 թ. աշնանից պահպանվում է օրինագիծը Քնեսեթի քննարկմանը վերադարձնելու տեսական հնարավորությունը, եթե Բ. Նեթանյահուն և նրա կոալիցիոն գործընկերները նոր ընտրությունների արդյունքում կրկին մեծամասնություն ապահովեն և նպատակահարմար գտնեն շարունակել օգտագործել Ցեղասպանության թեման՝ որպես Թուրքիայի վրա ճնշման գործիք: Միևնույն ժամանակ, փոխված քաղաքական իրողությունների ազդեցության տակ կամ Անկարայի և Բաքվի հետ առճակատման ուղեգծի վերանայման դեպքում նրանք կարող են ամբողջովին հրաժարվել այդ նախաձեռնությունից:

Չի կարելի բացառել նաև այլ սցենար. նույնիսկ «Լիկուդ» կուսակցության և աջ արմատական դաշինքի պարտության դեպքում նրանց քաղաքական ընդդիմախոսները, մեծամասնություն ստանալով Քնեսեթում, կարող են շարունակել նախկին կոալիցիայի գիծը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում:

Իսրայելցի վերլուծաբանների կանխատեսումներով, հոկտեմբերյան ընտրություններում խոշորագույն ընդդիմադիր «Բեյահադ» («Միասին») դաշինքը կարող է ջախջախիչ հաղթանակ տանել Բ. Նեթանյահուի կոալիցիայի նկատմամբ: Դաշինքի կազմում ընդգրկված երկու քաղաքական ուժերն էլ համակարծիք են Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: «Յեշ Ատիդ» («Կա ապագա») կուսակցության առաջնորդ Յաիր Լապիդը ավանդաբար հանդես է գալիս որպես Օսմանյան կայսրությունում 1915 թ. ողբերգության պաշտոնական ճանաչման

ամենահետևողական կողմնակիցը՝ այդ նախաձեռնությունն առաջ մղելով նույնիսկ ԱԳՆ-ն (2021–2022 թթ.) և Իսրայելի կառավարությունը (2022 թ. հուլիս–դեկտեմբեր) ղեկավարելու շրջանում, երբ Անկարայի հետ հարաբերությունների սրումը դեռ օրակարգում չէր:

Իր հերթին, դաշինքի երկրորդ մասնակիցը՝ «Բենեթ 2026» կուսակցությունը, Նաֆթալի Բենեթի գլխավորությամբ, ունի ավելի կոշտ դիրքորոշում: Նրա առաջնորդը հայերի կոտորածը հավասարեցնում է Հոլոքոստի հետ և ժամանակակից Թուրքիան Իսրայելի համար ավելի լուրջ սպառնալիք է համարում, քան Իրանը: Եվ Յ. Լապիդը, և Ն. Բենեթը համոզված են, որ Անկարայի նկատմամբ Բ. Նեթանյահուի չափազանց մեղմ քաղաքականությունը մեծապես նպաստել է հրեական պետության նկատմամբ Ռեջեփ Թայիփ Էրդողանի թշնամական քաղաքականության և անթույլատրելի հռետորաբանության ձևավորմանը:

Վերլուծելով Իսրայելում իրավիճակի զարգացման հեռանկարները՝ փորձագետները հաշվի են առնում հայտնի քաղաքական օրինաչափությունը, համաձայն որի ընդդիմադիր ուժերի կոշտ հռետորաբանությունն ու արմատական դիրքորոշումները հաճախ մեղմվում են նրանց իշխանության գալուց հետո: Այնուամենայնիվ, ներկա իրողություններում չի կարելի բացառել, որ ընտրազանգվածի հաջողության դեպքում «Բեյահադ» դաշինքը ոչ միայն կպահպանի Բ. Նեթանյահուի աջ արմատական կառավարության որդեգրած ուղեգիծը *«հայկական նախաձեռնության»* նկատմամբ, այլև այն կհասցնի տրամաբանական ավարտի՝ վերածելով Անկարայի վրա արտաքին քաղաքական ճնշման գործուն գործիքի:

Տարածաշրջանում ռազմաքաղաքական առաջնորդության, ԱՄՆ-ի առանցքային դաշնակցի կարգավիճակի, Մերձավոր Արևելքի էներգապաշարների և կարևորագույն առևտրային ուղիների նկատմամբ վերահսկողության համար Թուրքիայի և Իսրայելի միջև տարաձայնությունները արդեն վերաճել են բաց առճակատման: Այս հանգամանքը անխուսափելի է դարձնում այնպիսի քաղաքական գործիքների կիրառումը, որոնք նախկինում դիտարկվում էին որպես չբարձրաձայնվող արգելք:

5. Եզրակացություն. մարտավարական դադա՞ր, թե՞ առճակատման ռազմավարական գործիք

Այդ իսկ պատճառով Անկարան և Բաքուն բոլոր հիմքերն ունեն Բինյամին Նեթանյահուի կաբինետի նախաձեռնության մեջ տեսնելու ոչ միայն իրավիճակային քաղաքական խուսավարում, որը հետագայում դադարեցվեց հենց իշխող կոալիցիայի կողմից: Ըստ ամենայնի, այս քայլը նշանավորում է Իսրայելի երկարաժամկետ պետական ռազմավարության սկզբնական փուլը, որն ուղղված է Թուրքիայի և նրա դաշնակիցների հետ համակարգային դիմակայությանը և, հավանաբար, կպահպանի իր արդիականությունը՝ անկախ հրեական պետությունում իշխանության ապագա փոխդասավորությունից:

Ակնհայտ է, որ չնայած 25-րդ գումարման Քնեսեթի օրակարգից հանվելուն, Օսմանյան կայսրությունում անցյալ դարի ողբերգական իրադարձությունների հարցն արդեն վերջնականապես վերածվել է իսրայելա-թուրքական մրցակցության առանցքային գործիքի: Այս առումով Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը մնում է բացառապես ժամանակի հարց: